1049. ՆՈՐ ՓԻՓԻ, փայտածածկ եկեղեցու պատին.

Սուրբ Աստուածածին բարեխօս տէր Ըստեփանոսին. թվ. :ՌՃԺԹ: (1670):

Հրատ. Բարխուդարեանց. 298։

1050. ՆՈՒՑՆՏԵՂ, փայտի սյունի վրա՝

Իշխանութեան Մելիք Հախնազարի, Պապեր ի Քրիստոս յիշեցէք, Հրապետն, որդիք Պալին Սարգիս, հանգուցեալ որդին տէր Ղազար, մայրն իւր Նարկիզն. թվ. :ՌՃԼԶ: (1687):

Հրատ. Բարխուդարեանց, 298։

106. ԳԱՐԴՄԱՆԻԿ ԳՅՈՒՂ

1051. Գյուղի մեջ հիշատակված հայկական հուշարձաններից այժմ գրեթե ոչինչ չի մնացել։ Գյուղից դեպի հարավ եղել է մի մատուռ՝ Սրբլթան անունով, որի մոտ կանգնած է եղել 3½ մետր բարձրությամբ մի մահարձան՝ հետևյալ արձանագրությամբ.

Այս է տապան տուրբ Սրապիոնի, թուն մեծին Սամոռին, մեծին Սատին. թվ. :ՉՁ: (1331):

Հրատ. Բարխուդարեանց, 302։ Լալաեան, V, 312։

1052. ԳԱՐԴՄԱՆԻԿ ԳՅՈՒՂԻ հանգում եղել է ավերակ գյուղատեղ՝ Ղարաղ թավա անունով, ուր եկեղեցու սյունների վրա կա՝

Ես Խուրոմս. թվ. :ՌՃԽԱ: (1692):

1053. Ի թվ. :ՌՃՆԵ: (1706):

Հրատ. Բարխուդարեանց, 302։ Լալաեան, V, 312։

107. ՓԱՌԻՍՈՍ ՔԱՂԱՔԱՏԵՂ (ՇԱԼԱՔԵՆԴ) ԵՎ ՇՐՋԱԿԱՑՔ

Ա. Փառիս քաղաքատեղ. գտնվում է Շամքոր գետի վերին հոսանքում, նրա երկու ափերին։ Այժմ մնացել են տնաաեղերի հետքերը միայն։ Ավերակների, նուշնպես և հուշարձանների բոլոր քարերը տարվել են շրջակա գյուղերի բնակիչների կողմից։ Դեռևս XIX դարի վերջերին, ըստ Մ. Բարխուդարյանցի նկարագրության, ավերակների մեջ նկատելի էին տասն և մեկ եկեղեցիների ավերակները և երկու կամուրջները։ Մեծ եկեղեցին ունեցել է 15 մ. երկարություն և 11½ մ. լայնություն։ Ավերակների սահմաններում հեղինակը՝ միայն երկու արձանագրված խաչքարեր է տեսել (մեր № 1054, 1055 արձանագրությունները)։ Դրանք տեղաշարժվել և դրվել են երկաթուղու գծի տակ։

Քաղաքատեղիի հյուսիսային եզրին գտնվող մի բարձր լեռնաբազուկի արևելյան ծայրին բավական լավ պահպանված մնում է Փառիսոսի բերդը՝ բազմաթիվ կիսակլոր աշտարակներով։ Պարիսպների հաստությունը 2½ մետր է. ներսում կան բազմաթիվ շենքերի ավերակներ, մատուռի ու ջրամբարի մնացորդներ։

Բ. Փառիսոսի վանք. գտնվելիս է եղել քաղաքից ոչ հեռու, Տանձուտ մեծ գյուղի ավերակներից փոքր-ինչ վեր՝ մի անտառապատ սարահարթի վրա։ Բաղկացած է եղել երկու եկեղեցիներից և մեկ մատուռից ու դավիթներից։ Նկարագրողներն այստեղ միայն մեկ արձանագրություն են նկատել (մեր № 1056)։ Այս հուշարձանը մենք տեսնել չկարողացանք։

Գ. Ս. Հովհաննես եկեղեցի. գտնվում է քաղաքատեղիից 4—5 կմ դեպի արևելք՝ բարձր և անտառապատ լեռների վրա։ Մի փոքր և կիսավեր շենք է. պատերի ստորին մա-